

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ԲԱԼԴԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ ՄԱՆՎԵԼԻ

**ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԸ
ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՑՈՒՄ**

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ-2020

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Մելքոնյան Աշոտ Աղասու

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր

Կոստիկյան Քրիստինե Պետրոսի

պատմական գիտությունների թեկնածու

Առաքելյան Գրիգոր Խաչատուրի


Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2020 թ. հուլիսի 24-ին՝ ժամը 14⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2020 թ. հունիսի 11-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ՝



Մուրադյան Հ.Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍԻԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Վերջին տասնամյակների ընթացքում հայ վաճառականության պատմության վրա բևեռվել է հայ և հատկապես օտարազգի հետազոտողների ուշադրությունը: Տևական ժամանակ գերազանցապես եվրոպական ուղեգրական աղբյուրների հիման վրա ուսումնասիրվող 17-18-րդ դդ. հայ վաճառականության գործունեության իրական պատկերը լայնորեն դրսևորվեց միայն վերջին տարիներին՝ մասնավորապես Սեպուհ Ասլանյանի մեծարժեք աշխատությունում¹ հայկական առևտրական աղբյուրագիտական հսկայաձավալ նյութի հանրահռչակմամբ: Աշխարհի շուրջ 30 տարբեր արխիվներում պահվող ու տասնյակ հազարների հասնող այս վավերագրերը, որոնց հետևողական ուսումնասիրությունը դեռ նոր է միայն սկսվում, ի գորու են հետաքրքրական հետազոտությունների առատ նյութ մատակարարել դեռ շատ տարիներ: Հայ վաճառականության պատմության այս փաստաթղթային հավաքածուների կողքին իրենց պատվավոր տեղն են զբաղեցնում առևտրական բովանդակությամբ ոչ մեծաթիվ հայերեն ձեռագրերը: Դրանց շարքում առանձնանում են Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցի առևտրական դասընթացի հեղինակ Կոստանդ Ջուղայեցու (1630-ական թթ.-1702 թ.) վաճառականական ձեռնարկ-դասագրքերը՝ որպես հայկական վաճառականական գրականության կարևոր նմուշներ:

Համաշխարհային առևտրի բնագավառում ներկայումս մեծ ծավալ ստացած ուսումնասիրություններն անհրաժեշտ են դարձնում պատշաճ ուշադրություն ցուցաբերել հայ վաճառականության գործունեությանն առնչվող ինչպես մատենագրական ժառանգության, այնպես էլ փաստաթղթային մեծաթիվ հավաքածուների հանդեպ, հատկապես որ Նոր Ջուղայի հայկական առևտրական համայնքը հավանաբար միակն էր վաղ արդի դարաշրջանի² Ասիայում, որից մեզ է հասել առևտրական բնույթի աղբյուրագիտական հսկայական ժառանգություն³: Այս տեսանկյունից հայկական վաճառականական ձեռնարկների՝ որպես նույն ժամանակներում շարադրված համաշխարհային առևտրական երկերի հայկական օրինակների հետազոտությունը լիովին համահունչ կարելի է համարել պատմագիտության արդի միտումներին: Հայկական վաճառականական ձեռնարկների լիարժեք ուսումնասիրությունն ինչպես իր նպաստը կարող է բերել հայ բնագրագիտությանը, այնպես էլ, առանց որևէ չափազանցության, հետաքրքրական կարող է

¹ Տե՛ս Aslanian S., *From the Indian Ocean to the Mediterranean: The Global Trade Networks of Armenian Merchants from New Julfa*, Berkeley, 2011:

² Արևմտյան պատմագիտական հետազոտություններում վաղ արդի դարաշրջան եզրույթի ներքո միավորվում է մոտավորապես 1500-1800 թվականներն ընդգրկող ժամանակաշրջանը: Վաղ արդի դարաշրջան եզրույթը հայագիտական հետազոտություններում շրջանառելու մասին, հղված գրականությամբ հանդերձ, տե՛ս մեր աշխատության «Վաղ արդի դարաշրջանն ու հայոց պատմությունը» ներածական մասը՝ Բաղդարյան Ս., Նոր Ջուղայից Երևան ու Էրզրում. ճիզվիտ քարոզիչները հայկական բնակավայրերում XVII-XVIII դդ., Երևան, 2018, էջ 9-23:

³ Տե՛ս Aslanian S., նշվ. աշխ., էջ 4:

լինել համաշխարհային առևտրի պատմության մասնագետների համար: Ուշ միջնադարում ու վաղ արդի դարաշրջանում շարադրված առևտրական երկերի կարևորության տեսանկյունից տեղին է հիշատակել բրիտանացի հետազոտող Պիտեր Սպաֆֆորդի այն գնահատականը, ըստ որի՝ դրանք «գրեթե նույնքան օգտակար են ժամանակակից պատմաբանների համար, որքան դրանց կազմողների համար էին»⁴:

Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները: Հետազոտությունը նպատակ ունի Կոստանդ Ջուղայեցու մատենագրական ժառանգության վերհանման միջոցով ուսումնասիրելու հայկական վաճառականական ձեռնարկները՝ որպես Նոր Ջուղայի համաշխարհային առևտրական ցանցի հաջողությունը պայմանավորող գործոններ:

Ուսումնասիրության շրջանակներում առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- հետազոտել Կոստանդ Ջուղայեցու գործունեության ողջ պատկերը՝ լույս սփռելով նրա կյանքի երբևէ չլուսաբանված փուլերի ու վաճառականական ձեռնարկներ շարադրելու անձնական շարժառիթների վրա,

- ներկայացնել Կոստանդ Ջուղայեցու՝ որպես 17-րդ դարի անտեսված հայ հեղինակի մատենագրական ժառանգության 2 խմբերը՝ տպագիր ու ձեռագիր,

- հստակեցնել Կոստանդ Ջուղայեցու երկերի բնագրերն ամփոփող ձեռագրերի շրջանակը՝ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դնելով դրանց հիշատակարաններում ամփոփված նյութերը,

- պարզաբանել 17-18-րդ դդ. հայկական վաճառականական գրականության վրա Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկների ազդեցության հարցը,

- քննության առնել հայկական վաճառականական ձեռնարկներում ամփոփված առևտրական տեղեկատվությունը՝ ըստ պայմանական խմբերի,

- քննարկել հայ վաճառականների կրթության հարցը Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկ-դասագրքերի դիտանկյունից,

- լուսաբանել վաճառականական ձեռնարկների շրջանառությունը Նոր Ջուղայի առևտրական ցանցում՝ որպես տեղեկատվության փոխանցման կարևոր միջոցներ,

- դիտարկել հայկական վաճառականական ձեռնարկները եվրոպական առևտրական երկերի համապատկերում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ

ՆՈՐՈՒՅԹԸ: Աշխատանքը շարադրված է ձեռագրական, արխիվային նյութերի և ուսումնասիրությունների համադիր հետազոտության միջոցով և բնագրագիտական դիտարկումների, քննական ու համեմատական վերլուծության սկզբունքների կիրառմամբ:

Մասնագետների տեսադաշտից մեծ հաշվով դուրս մղված ու երբևէ չուսումնասիրված վաճառականական ձեռնարկները, որոնք ընկած են այս աշխատանքի հիմքում, քննության են առնվել համակողմանիորեն՝ սկսած ձեռագրական ավան-

⁴ Spufford P., Profit and Power: The Merchant in Medieval Europe, London, 2003, p. 52.

դույթի ներկայացումից, բնագրերն ամփոփող ձեռագրերի ճշգրտումից մինչև հայ վաճառականների միջավայրում այդ դասագրքերի գործածության թեմատիկան: Հայկական վաճառականական ձեռնարկների հեղինակ Կոստանդ Ջուղայեցին կարող է բնորոշվել որպես «հայկական երկրորդ վերածնունդ» բնորոշված 17-րդ դարի հայ մատենագրության առանցքային, սակայն ստվերում մնացած հեղինակ, որի գործունեության փուլերի անգամ նախնական պատկերը հայտնի չի եղել մինչ օրս: Նույն բնորոշումը լիովին վերաբերում է նաև նրա մատենագրական ժառանգությանը, որի վերաբերյալ առկա աղոտ պատկերացումները սույն ուսումնասիրության շրջանակներում փոխարինվել են նրա տպագիր ու ձեռագիր երկերի մանրամասն նկարագրությամբ: Երևանում, Նոր Ջուղայում, Օքսֆորդում, Վենետիկում ու Վիեննայում պահվող հայկական ձեռագրերի, ինչպես նաև՝ Նոր Ջուղայի ու Վենետիկի դիվանների փաստաթղթային հավաքածուների ուսումնասիրության շնորհիվ հնարավոր է դարձել առաջին անգամ իրականացնել Կոստանդ Ջուղայեցու՝ որպես հայկական վաճառականական ձեռնարկների հեղինակի թողած գրավոր ժառանգության ամբողջական հետազոտություն:

Մասնավորապես՝ բացահայտվել է Կոստանդ Ջուղայեցու վաճառականական գործունեությունը առնվազն 1660-ական թթ. դրությամբ, ինչը նրան զինել էր համաշխարհային առևտրի մասին մանրամասն տեղեկատվությամբ ու փորձառությամբ՝ պայմանավորելով նրա անցումը վաճառականից առևտրական երկերի հեղինակի: Ճշգրտվել է նրա գրավոր ժառանգությունն ամփոփող ձեռագրերի թվաքանակը՝ այլ ուսումնասիրություններում հայտնի 3-4 ձեռագրից հասնելով 6-ի: Բազմաթիվ բնագրերի հետազոտության արդյունքում պարզ է դարձել, որ Կոստանդ Ջուղայեցուց հետո վաճառականական ձեռնարկներ շարադրած հայ հեղինակներն այս կամ այն կերպ օգտվել են նրանից՝ որպես հայ իրականության մեջ առևտրական գրականության ժանրի հիմնադրից:

Յուրաքանչյուր վաճառականի կյանքում հսկայական դեր խաղացած ու նրա գործնական հաջողությունը պայմանավորած առևտրական տեղեկատվությունն առաջին անգամ ամենայն մանրամասնությամբ դիտարկվել է հայկական առևտրական երկերում, ինչի արդյունքում առանձնացվել է 3 շերտ՝ բարոյախոսական ու առևտրական խորհուրդների ներկայացում, համաշխարհային առևտրի կենտրոնների նկարագրություն, առևտրական թվաբանության հարցերի քննարկում: Ձեռնարկ-դասագրքերի բովանդակային վերլուծությունից հետո անցում է կատարվել դրանց գործածությանը հայ վաճառականների միջավայրում՝ նախ՝ որպես դասագրքեր առևտրական դասընթացի շրջանակում, ապա՝ որպես օգտակար ուղեցույցներ անձնական օգտագործման նպատակով:

ԱՄՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ: Ատենախոսությունում արծարծված հարցերն ընդհանուր առմամբ վերաբերում են 17-րդ դ. և 18-րդ դ. առաջին կեսին, այլ կերպ ասած՝ այն ժամանակաշրջանին, երբ գործում էր հայ վաճառականների համաշխարհային առևտրական ցանցը՝ Նոր Ջուղա կենտրոնով (1605/1606-1747 թթ.):

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՔՆ ՈՒ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ: Ուսումնասիրության աղբյուրագիտական հենքը կազմում են 17-18-րդ դդ. շարադրված հայկական վաճառականական ձեռնարկ-դասագրքերը, որոնց շարքում կենտրոնական տեղ է գրավում Կոստանդ Ջուղայեցու մատենագրական ժառանգությունը: Դրա զգալի մասը, անտիպ լինելով, ամփոփված է հայերեն ձեռագրերում, ինչը որոշ չափով պայմանավորել է գիտական շրջանառությունից այս երկերի դուրս մնալը: Կոստանդ Ջուղայեցու վաճառականական ձեռնարկները մեզ են հասել 6 ընդօրինակություններով, որոնք պահվում են Մետրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում⁵, Օքսֆորդի Բոդլեյան գրադարանում⁶ ու Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքում⁷: Կոստանդ Ջուղայեցու անտիպ ձեռնարկներն ամփոփող այս ձեռագրերից բացի՝ հայկական վաճառականական գրականության մասին պատկերացում կազմելու ու համեմատական վերլուծություն իրականացնելու համար հարկ է եղել օգտվել առևտրական բնագրեր ամփոփող այլ ձեռագրերից ևս⁸:

Հայ հնատիպ գրքի բազմաթիվ նմուշներից հետազոտության համար առանցքային նշանակություն են ունեցել 1675 թ. Մարսելում լույս տեսած «Արիեստ համարողութեան» և 1699 թ. Ամստերդամում հրատարակված «Գանձ չափոյ, կշոյ, թւոյ և դրամից բոլոր աշխարհի» երկերը⁹: Այս վաճառականական ձեռնարկներից առաջինը, ինչպես ուսումնասիրությունն է ցույց տալիս, պատկանում է հենց Կոստանդ Ջուղայեցու գրչին, իսկ երկրորդի հեղինակը Ղուկաս Վանանդեցին է:

Ձեռագրական նյութերից ու հնատիպ գրքերից բացի՝ վավերագրական հավաքածուները ևս արժեքավոր տվյալներ կարող են մատակարարել սույն թեմայի ուսումնասիրությանը, հատկապես որ Կոստանդ Ջուղայեցու գործունեության վաղ փուլերի վրա լույս սփռելու միակ միջոցը առևտրական փաստաթղթերն են: Մեզ հաջողվել է Կոստանդ Ջուղայեցու վաճառականական գործունեությունը փաստող առևտրական վավերագրեր հայտնաբերել Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դիվանում ու Վենետիկի պետական արխիվում¹⁰: Հայկական առևտրական նյութերի

⁵ Տե՛ս Մետրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետ՝ ՄՄ), ձեռ. թիվ 5994, 8443 և 10704:

⁶ Տե՛ս Օքսֆորդի Բոդլեյան գրադարան, հայ. ձեռ. թիվ f 14 և f 15:

⁷ Տե՛ս Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. թիվ 64:

⁸ Տե՛ս ՄՄ, ձեռ. թիվ 1511, 2637, 2950, 3669, Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարան, ձեռ. թիվ 1453, 1800, Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարան, ձեռ. թիվ 980 և այլն:

⁹ Տե՛ս Արիեստ համարողութեան ամբողջ եւ կատարեայ, Մարջիլեայ, 1675, Ղուկաս Վանանդեցի, Գանձ չափոյ, կշոյ, թւոյ և դրամից բոլոր աշխարհի, Ամստերդամ, 1699:

¹⁰ Տե՛ս Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դիվան, Ջանազան նիւթերով գրութիւններ, թղթապանակ 5, առևտրական գրութիւններ, կալւածագրեր, վաճառագրեր վարդապետական կնիքներով, 1643-1699 (առանց համարակալման), Archivio di Stato di Venezia, Avogaria di Comun, busta 3949, Documenti Armeni, busta 1:

հսկայական ծավալի պայմաններում Կոստանդ Ջուղայեցուն հիշատակող այլ փաստաթղթեր ևս գտնելու հավանականությունն, անշուշտ, փոքր է:

Հայկական վաճառականական ձեռնարկների ուսումնասիրվածության հարցը, պայմանավորված դրա վերաբերյալ առկա սակավաթիվ գրականությամբ, միայն հպանցիկ մեկնաբանությունների կարիք ունի: Երբևէ ուսումնասիրված ու մանրամասն քննարկված չլինելով՝ հայկական առևտրական այս երկերը միայն մի քանի կարևոր անդրադարձների են արժանացել առկա գրականության մեջ: Այսպես՝ Կոստանդ Ջուղայեցու վաճառականական ձեռնարկներին հատկացված կարևորության տեսանկյունից առաջին հերթին հիշատակելի են Վահան Փափագյանի հետազոտությունները¹¹, որոնցում ոչ միայն շրջանառության մեջ են դրվել Կոստանդ Ջուղայեցու գրանցած մի շարք տեղեկություններ, այլև Մաշտոցյան Մատենադարանի թիվ 8443 ձեռագրի հիման վրա հրատարակվել է «Աշխարհաժողով» երկի մի փոքրածավալ հատված, ինչը մնում է այս բնագրի հրատարակության եզակի օրինակ: Հետազոտողը Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողով»-ի տվյալներն օգտագործել է առևտրական ուղիների ու մաքսատուրքերի ուսումնասիրության համար:

Առաջին անգամ Կոստանդ Ջուղայեցուց մեզ հասած վաճառականական գրականությունը հիշատակելու, Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցի առևտրական դասընթացի վերաբերյալ նախնական տվյալներ ի մի բերելու տեսանկյունից հիշատակության է արժանի Հ. Տեր-Հովհանյանցի «Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան» երկհատոր աշխատությունը¹²: Գերազանցապես Նոր Ջուղայում պահպանված ձեռագրական ու փաստաթղթային հարուստ ժառանգության հիման վրա համակողմանիորեն շարադրելով Սեֆյան Իրանի մայրաքաղաքի հայկական արվարձանի պատմությունը՝ Հ. Տեր-Հովհանյանցը մի քանի անգամ հիշատակել է Կոստանդ Ջուղայեցուն ու նրա մատենագրական ժառանգությունը: Նրա՝ որպես առաջին անգամ ջուղայեցի դպրապետ-հեղինակին հիշատակած հետազոտողի դիտարկումները ուղենշային նշանակություն են ունեցել, քանի որ հետագա բազմաթիվ ուսումնասիրություններում պարզապես ընդօրինակվել են նրա ներկայացրած տվյալները:

Հայկական վաճառականական ձեռնարկների տեղեկությունները շրջանառության մեջ դնելու առումով բացառիկ կարևորություն ունեն հայ վաճառականներ Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու և Շահվելու որդի Սարհադի հաշվեմատ-

¹¹ Տե՛ս Փափագյան Վ., Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողովի» Հալեպ-Թավրիզ մայրուղուն վերաբերող հատվածը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1985, թ. 6, էջ 80-85, նույնի, Հայաստանի առևտրական ուղիները միջազգային առևտրի ոլորտում XVI-XVII դարերում, Երևան, 1990:

¹² Տե՛ս Տեր-Յովհաննեսնց Յ., Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, հ. Ա, Նոր Ջուղա, 1880, հ. Բ, Նոր Ջուղա, 1881:

յանների ուսումնասիրությունները¹³: Դրանցով ըստ էության սկիզբ է դրվել 17-18-րդ դդ. հայկական առևտրական բնագրերի հրատարակության գործին՝ որպես տնտեսական պատմության մի ուրույն բնագավառ: Կարևոր է արձանագրել, որ այդ աշխատություններում մեծ աշխատանք է կատարվել հիշատակված չափի, կշռի, դրամի միավորները վերծանելու ու համեմատության մեջ դնելու ուղղությամբ: Ընդ որում, հաշվեմատյաններում գործածված դրամագիտական ու չափագիտական տվյալները մեկնաբանելիս և զանազան եզրույթների բացատրությունները կազմելիս բնագրերի պատրաստողներ Լևոն Խաչիկյանը, Հակոբ Փափագյանն ու Շուշանիկ Խաչիկյանը չեն վարանել դիմել նաև վաճառականական ձեռնարկներում ամփոփված ուշագրավ տվյալներին՝ դրանով իսկ վերջիններս ընդգրկելով ուսումնասիրության ավելի ընդարձակ ոլորտում:

Հայ վաճառականության կրթության և նամակագրության հարցերը քննարկելիս վաճառականական ձեռնարկների վերաբերյալ արված դիպուկ գնահատականների առումով հիշատակման են արժանի Սեպուհ Ալախյանի հետազոտությունները¹⁴: Իր առաջ դրված խնդրի տեսանկյունից ուսումնասիրողի անդրադարձը թեև համառոտ է, իսկ գնահատականները՝ ոչ ծավալուն, սակայն դրանով իսկ որոշակի տեղաշարժ է կատարվում երկերի մասին առկա զուտ նկարագրական տեղեկատվությունն ընդլայնելու, ինչպես և՛ միջազգային գիտական շրջանակներին ծանոթացնելու հարցում:

Հայկական վաճառականական երկերի վերաբերյալ կարևոր դիտարկումների տեսանկյունից առանձնանում է նաև Գեղամ Գևոնյանի աշխատանքը¹⁵: Այն թեև նվիրված է Ղուկաս Վանանդեցու առևտրական ձեռնարկի ուսումնասիրությանը, այնուհանդերձ հետազոտողը չի վարանում քանիցս հիշատակելու նաև Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողով»-ը՝ որպես հայ վաճառականության գործածած առևտրական բացառիկ դասագիրք: Բավական է նշել, որ այդ հետազոտությունը ներշնչված է եղել Աննալների պատմագիտական դպրոցի խոշորագույն ներկայացուցիչ, ֆրանսիացի պատմաբան Ֆեռնան Բրոդելի աշխատությամբ ու գրվել է նրա ցուցումով, ինչպես հողվածի սկզբում խոստովանում է հեղինակը: Կարևոր է նշել նաև, որ այլ ուսումնասիրողների հետ համահեղինակությամբ գրված մեկ այլ աշխատանքում Կոստանդ Ջուղայեցու վաճառականական ձեռնարկների

¹³ Տե՛ս Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու հաշվետումարը, աշխատասիրությամբ՝ Լ. Խաչիկյանի ու Հ. Փափագյանի, Երևան, 1984, Շահվելու որդի Սարիադի հաշվեմատյանը, աշխատասիրությամբ՝ Շ. Խաչիկյանի, Երևան, 1994:

¹⁴ Տե՛ս, օրինակ, Aslanian S., նշվ. աշխ., նույնի, “The Salt in a Merchant’s Letter”: The Culture of Julfan Correspondence in the Indian Ocean and the Mediterranean, “Journal of World History”, 2008, vol. 19, no. 2, pp. 127-188, նույնի, The Circulation of Men and Credit: The Role of the Commenda and the Family Firm in Julfan Society, “The Journal of the Social and Economic History of the Orient”, 2007, vol. 50, no. 2, pp. 124-171:

¹⁵ Տե՛ս Kévonian K., Marchands arméniens au XVIIIe siècle: A propos d’un livre arménien publié à Amsterdam en 1699, “Cahiers du Monde Russe et Soviétique”, vol. 16, no. 2, 1975, pp. 199-244:

հրատարակումն ու թարգմանությունը Գ. Գևոնյանը համարել է հայ առևտրի պատմության առաջափորտ խնդիրներից մեկը¹⁶:

Եվ վերջապես, հայկական վաճառականական ձեռնարկների ուսումնասիրության ասպարեզում պետք է հիշատակել Հակոբ Անասյանի կատարած աշխատանքը: Դեռևս 1958 թ. Մատենադարանի ապագա անելիքների ու պատրաստվող բնագրերի հրատարակությունների շարքում Լ. Խաչիկյանը ներառել է, իր խոսքով, «Կոստանդ Ջուղայեցու առևտրական ձեռնարկը (կազմող՝ Հ. Անասյան)»¹⁷: Հ. Անասյանին, փաստորեն, Մատենադարանի որոշմամբ հանձնարարված է եղել Կոստանդ Ջուղայեցու գրչին պատկանող հայկական վաճառականական ձեռնարկներից մեկի գիտական բնագրի պատրաստության գործը: Այդուհանդերձ, մեծանուն գիտնականը չի հասցրել ամբողջացնել այս ասպարեզում կատարած իր ուսումնասիրությունները, և հայկական առևտրական երկերի ուղղությամբ նրա կատարած աշխատանքներն այդպես էլ մնացել են ձեռագրային վիճակում՝ բացառությամբ երկու փոքրիկ, սակայն խիստ կարևոր անդրադարձների¹⁸:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Աշխատանքը, հայկական վաճառականական ձեռնարկ-դասագրքերի ուսումնասիրության անդրաձևի փորձը լինելով, հավակնություն ունի հիմք դառնալու 17-18-րդ դդ. հայկական առևտրական գրականության համապարփակ հետազոտության համար: Բացի այդ, սույն ուսումնասիրությունը հուսալի հենարան կարող է լինել Կոստանդ Ջուղայեցու անտիպ ձեռնարկների բնագրերի գիտական հրատարակության ճանապարհին, որի հաջորդ քայլը պետք է լինի ձեռնարկների անգլերեն թարգմանությունը՝ դրանց գիտական լայն շրջանառությունն ու հետազոտությունների ավելի ընդարձակ դաշտ ներգրավումն ապահովելու համար¹⁹:

Ատենախոսության հիմնական դրույթները կարող են օգտագործվել բուհերում հայոց պատմության մասնագիտացված դասընթացների, օրինակ՝ հայոց

¹⁶ Տե՛ս Depeyrot G., Kévonian K., Mouradian C., Groupe de recherches d'histoire arménienne «monnaies, réseaux, politique», “Les Cahiers du Centre de Recherches Historiques”, 2000, vol. 24 (<https://journals.openedition.org/ccrh/2082#tocto1n2>, մատչումը՝ 20.04.2019):

¹⁷ Խաչիկյան Լ., Մատենադարանը անցյալում և սովետական իշխանության տարիներին, «Բանբեր Մատենադարանի», հ. 4, Երևան, 1958, էջ 22:

¹⁸ Տե՛ս Անասյան Հ., Հայկական մատենագիտություն (Ե-ԺԸ դդ.), հ. Բ, Երևան, 1976, էջ 874-877, նույնի, Հայերեն թուաբանական դասագրքերի պատմության համար, Ա. «Արիեստ համարողութեան», Բ. «Արիթմետիկայ», «Մանր երկեր», Լուս Անցելես, ա. հ., 1987, էջ 671-674:

¹⁹ Այս առիթով տեղին է նշել, որ ավարտական փուլում են Կոստանդ Ջուղայեցու վաճառականական ձեռնարկների գիտական բնագրերի պատրաստման մեր աշխատանքները, որոնց զուգահեռ ընթանում է նաև բնագրերի ծավալին գերազանցող հանգամանակից ծանոթագրությունների կազմության ու առևտրական զանազան հասկացությունների բացատրության առավել դժվարին գործը: Կոստանդ Ջուղայեցու առևտրական երկերի հրատարակության սույն գիտական ծրագիրն իրականացվում է Սպահանի հայոց թեմի թեմական խորհրդի նյութական աջակցությամբ, իսկ նախատեսվող հրատարակությունն ընդգրկվելու է Մատենադարանի «Տեսնական պատմության վավերագրեր» շարքում՝ կազմելով այդ մատենաշարի 4-րդ հատորը:

պատմության աղբյուրագիտության ու Հայաստանի տնտեսական պատմության դասավանդման շրջանակներում:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսության հիմնական բովանդակությունը հրապարակվել է հեղինակի 8 աշխատանքներում: Բացի այդ, հետազոտության հիմնական դրույթները ներկայացվել են նաև 2017-2019 թթ. տեղի ունեցած միջազգային տարբեր գիտաժողովներում (ՀՀ, ԱՄՆ, Հունգարիա): Սույն ուսումնասիրության համար անփոխարինելի նշանակություն է ունեցել Եվրամիության Erasmus+ ծրագրի շրջանակում 2019 թ. փետրվար-հուլիսին Իտալիայում (Վենետիկ, Ֆլորենցիա) և Հայագիտական հետազոտությունների ազգային ընկերակցության (NAASR) տրամադրած դրամաշնորհի շնորհիվ 2020 թ. հունվար-փետրվարին Մեծ Բրիտանիայում (Օքսֆորդ) կատարված գիտահետազոտական աշխատանքը:

Ատենախոսությունը քննարկվել և դրական երաշխավորությամբ հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի կողմից:

ԱՏԵՆԱՒՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիակա-նությունը, ներկայացված են հետազոտության նպատակն ու խնդիրները, աղբյուրագիտական հիմքը և հիմնախնդրին առնչվող ուսումնասիրությունները:

Առաջին գլուխը՝ **«ԿՈՍՏԱՆԴ ԶՈՒՂԱՅԵՑԻՆ ՈՒ ՀԱՅՎԱԿԱՆ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԶԵՆՆԱՐԿՆԵՐԸ»** խորագրով, բաղկացած է 4 ենթագլխից:

Առաջին ենթագլուխը՝ **«Կոստանդ Ջուղայեցին՝ վաճառական ու վաճառականական ձեռնարկների հեղինակ»**, ներկայացնում է 17-րդ դարի հայ հեղինակ, Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դպրապետ Կոստանդ Ջուղայեցու գործունեության հայտնի ու անհայտ էջերը: Նրա մասին առկա տեղեկությունների միակ աղբյուրը մինչ օրս եղել է հայերեն ձեռագրերի հիշատակարանային նյութը, որը վերաբերում է 1685 թվականից ի վեր նրա ծավալած գործունեությանը: Հիմնվելով Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դիվանի ու Վենետիկի պետական արխիվի փաստաթղթերի վրա՝ ենթադրում ցույց է տրվում, որ առնվազն 1660-ական թթ. Կոստանդ Ջուղայեցին զբաղվել է առևտրական գործունեությամբ: Ընդգծվում է, որ վաճառականի կենսափորձը նրան զինել էր «առևտրի գաղտնիքների» իմացությամբ, ինչի շնորհիվ էլ վաճառական Կոստանդ Ջուղայեցին դարձավ վաճառականական ձեռնարկների հեղինակ: Համեմատությունը ցույց է տալիս, որ վաղ արդի Եվրոպայում ևս մեծ պահանջարկ ունեցող վաճառականական ձեռնարկ-դասագրքերը շարադրվում էին երբեմնի վաճառականների կողմից:

Երկրորդ ենթագլուխում՝ **«Կոստանդ Ջուղայեցու մատենագրական ժառանգությունը»**, ցույց է տրվում, որ Կոստանդ Ջուղայեցին բոլոր իրավունքներն ունի պատվավոր տեղ զբաղեցնելու վաղ արդի դարաշրջանի հայ հեղինակների շարքում: 17-րդ դարի հայ գրավոր մշակույթը կամ այսպես կոչված «հայկական

երկրորդ վերածնունդը» նա հարստացրել է առևտրական երկերով՝ դրանով իսկ ստեղծելով ու կայացնելով հայկական վաճառականական գրականությունը: Նրա մատենագրական ժառանգության գերակշիռ մասը հենց վաճառականական ձեռնարկ-դասագրքերն են՝ «Արիեստ համարողութեան», «Աշխարհաժողով», «Դռներն ռաղամին»: Դրանցից բացի՝ Կոստանդ Ջուղայեցուց մեզ են հասել «Հարցմունք և պատասխանի» գերազանցապես կրոնական բնույթի ոչ մեծածավալ երկը, ինչպես նաև՝ մի քանի չափածո ստեղծագործություններ:

Երրորդ ենթազխում՝ «**Աշխարհաժողով**» ու «**Դռներն ռաղամին**» **ձեռնարկների ձեռագրական ավանդույթը**», ներկայացվում է Կոստանդ Ջուղայեցու գրչին պատկանող երկու անտիպ վաճառականական ձեռնարկների ձեռագրական ավանդույթը: Ուսումնասիրությունը թույլ է տալիս ընդլայնել այդ երկերն ամփոփող հայտնի ձեռագրերի շրջանակը՝ այն հասցնելով 6 գրչագիր օրինակի (3-ը՝ Երևան, 2-ը՝ Օքսֆորդ, 1-ը՝ Նոր Ջուղա): Ուշադրություն է հրավիրվում դրանց երբևէ չհրատարակված հիշատակարանների վրա, որոնք թույլ են տալիս պատկերացնել ձեռագրերից յուրաքանչյուրի անցած ճանապարհը, ինչպես նաև՝ արձանագրել դրանց գործածությունը վաճառականական միջավայրում:

Չորրորդ ենթազխումը՝ «**Կոստանդ Ջուղայեցու վաճառականական ձեռնարկները՝ Ղուկաս Վանանդեցու ձեռնարկի աղբյուր**», նվիրված է հետևյալ հարցի պարզաբանմանը՝ արդյո՞ք «Գանձ չափոյ, կշոռյ, թոյ և դրամից բոլոր աշխարհի» ձեռնարկը Ղուկաս Վանանդեցին շարադրել է՝ ուշադրության կենտրոնում պահելով նախօրինակները՝ Կոստանդ Ջուղայեցու առևտրական դասագրքերը: Բնագրագիտական համեմատությամբ ցույց է տրվում, որ վանանդեցի հեղինակն իր երկի առանձին հատվածներում ակնհայտորեն օգտվել է Կոստանդ Ջուղայեցու անտիպ «Աշխարհաժողով»-ից, ինչպես նաև՝ 1675 թ. Մարսելում հրատարակված նրա «Արիեստ համարողութեան» գրքից: Դրանով հանդերձ, Ղուկաս Վանանդեցին հանդես է բերել ստեղծագործական ինքնուրույնություն՝ փոխառված հատվածների նկատմամբ ցուցաբերելով ընտրողական մոտեցում և իր երկում ներառելով առևտրական մեծաքանակ տեղեկատվություն, որը բացակայում է Կոստանդ Ջուղայեցու դասագրքերում: Ենթազխում ընդգծվում է, որ բազմաթիվ առումներով «Գանձ չափոյ»-ի յուրահատկությունն ու ինքնատիպությունը մղում են առավել քան խնդրահարույց համարելու վերջինս սոսկ «Աշխարհաժողով»-ի խմբագրված տարբերակի սահմաններում դիտարկելու լայն տարածում ունեցող մոտեցումը:

Երկրորդ զուխը՝ «**ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐՈՒՄ**» խորագրով, բաղկացած է 4 ենթազխումից:

Առաջին ենթազխում՝ «**Առևտրական տեղեկատվությունը և վաճառականները ու միջնադարից մինչև վաղ արդի դարաշրջան**», ներկայացվում են մի կողմից առևտրական տեղեկատվության դերը վաճառականի կյանքում, իսկ մյուս կողմից դրա փոխանցման ուղիներն ու տարբերակները: Հատուկ ուշադրություն է հրավիրվում տեղեկատվության շրջանառության այն փոփոխությունների ու նորամուծությունների վրա, որոնք տեղի են ունեցել ուշ միջնադարից վաղ արդի դարա-

շրջանին անցման շրջանում: Ենթազլխում առևտրական տեղեկատվության փոխանցման Եվրոպական փորձառությունը համեմատության մեջ է դրվում այն ուղիների հետ, որոնցով տեղեկատվությունը շրջանառվում էր Նոր Զուղայի առևտրական ցանցում:

Երկրորդ ենթազլխում՝ «Վաճառականական էթիկան ու խորհուրդները «Աշխարհաժողով» ձեռնարկում», քննարկվում են վաճառականներին ուղղված խորհուրդները, որոնք տեղ են գտել «Աշխարհաժողով» ձեռնարկում: Ընդգծվում է, որ խրատական այսպիսի հատվածները մեծ տարածում ունեին Եվրոպական առևտրական երկերում՝ նպատակ ունենալով ձևավորելու վաճառականական էթիկայի ու բարոյական կողեքսի նորմեր: Ցույց է տրվում, որ հայկական ձեռնարկի հեղինակը հստակ ծանոթություն է հանդես բերում այդ քննարկումներին, և Աստվածաշնչյան պատգամների նմանողությամբ նա իր բարոյախոսական խորհուրդների մի մասը ձևակերպում է որպես յուրատեսակ «վաճառականական պատվիրաններ»: Ինչ վերաբերում է առևտրական բնույթի խորհուրդներին, ապա դրանցում Կոստանդ Զուղայեցին հմտորեն ներկայացնում է այն պայմանները, որոնք անհրաժեշտ էին հաջող առևտրական գործունեություն ծավալելու համար:

Երրորդ ենթազլխում՝ ««Աշխարհաժողով»-ը և համաշխարհային առևտրի կենտրոնները», նվիրված է «Աշխարհաժողով»-ի մեծ մասը կազմող համաշխարհային առևտրի կենտրոնների նկարագրությանը: Շեշտադրվում է, որ իր «Աշխարհաժողով» ձեռնարկը Կոստանդ Զուղայեցին իսկապես վերածել է աշխարհի մասին տեղեկությունների ժողովածուի: Նա հերթականությամբ ու մանրամասնորեն ներկայացնում է համաշխարհային առևտրում ներգրավված այն երկրներն ու քաղաքները, որոնք ընկած էին ջուղայեցի վաճառականության անմիջական հետաքրքրությունների կիզակետում, ու որոնց մի զգալի մասում արդեն իսկ հաստատվել էին հայկական առևտրական համայնքներ: Մանիլայից մինչև Եվրոպայի ծայր արևմուտք ու ամերիկյան աշխարհամաս ձգվող այդ բնակավայրերից յուրաքանչյուրի նկարագրությունը՝ հիմնված որոշակի հետազոտական աշխատանքի վրա, թողնում է առևտրական հանրագիտարանի բառահողվածի տպավորություն, իսկ ձեռնարկ-դասագիրքը, ընդհանուր առմամբ, հիշեցնում է աշխարհի մասին յուրօրինակ հայկական հանրագիտարան:

Չորրորդ ենթազլխում՝ «Առևտրական թվաբանության հարցերը «Արհեստ համարողութան» ու «Դռներն ռաղամին» ձեռնարկներում», ուշադրություն է հրավիրվում հայկական վաճառականական ձեռնարկներում առևտրական թվաբանության հարցերի արձարծման վրա: Ցույց է տրվում, թե հայ վաճառականները տեսական գիտելիքի ու գործնական հմտությունների ինչ պաշար կարող էին ստանալ այս ձեռնարկներից՝ նախքան առևտրական գործունեություն ծավալել:

Երրորդ գլուխը՝ «ԿՈՍՏԱՆԴ ԶՈՒՂԱՅԵՑՈՒ ԶԵՌՆԱՐԿՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՑՈՒՄ» խորագրով, բաժանված է 2 ենթազլխի:

Առաջին ենթազլխում՝ «Կոստանդ Զուղայեցու ձեռնարկները և Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցը», ներկայացվում է Նոր Զուղայի Ս. Ամենա-

փրկիչ վանքի դպրոցի առանցքային տեղը հայ վաճառականության ստացած առևտրական-մասնագիտական կրթության համակարգում: Մանրամասնորեն ցույց է տրվում, որ դպրոցի առևտրական դասընթացը, որն անցկացնում էր Կոստանդ Ջուղայեցին իր սեփական ձեռնարկ-դասագրքերով, իր շուրջն էր համախմբում ջուղայեցի հարյուրավոր երիտասարդների, որոնք պատրաստվում էին զբաղվելու վաճառականական գործունեությամբ և ունեին անհրաժեշտ հմտություններ ձեռք բերելու կարիք: Ընդգծվում է, որ հայկական առևտրական ցանցի կենտրոն Նոր Ջուղայում Կոստանդ Ջուղայեցու վաճառականական ձեռնարկները կատարում էին դասագրքերի գործառույթ:

Երկրորդ ենթագլուխը՝ «**Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկների շրջանառությունը Նոր Ջուղայի առևտրական ցանցում**», նվիրված է հայկական առևտրական ցանցում վաճառականական ձեռնարկների շրջանառության հարցի քննարկմանը: Աղբյուրների քննությունն ակնհայտ է դարձնում, որ ցանցի կենտրոն Նոր Ջուղայում դասագրքի գործառույթ ունեցող ձեռնարկները ցանցի այլ մասերում հայ վաճառականների համար հանդիսացել են ուղեցույցներ, իսկ հայ հեղինակների համար եղել են ընթրիհանգստի աղբյուրներ: Ցույց է տրվում, որ առևտրական ձեռնարկներն իրենց ուրույն դերն են ունեցել ջուղայեցիների տեղեկատվական հոսքերում:

ԵԶՐԱԿԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ամփոփված են ատենախոսության հիմնական դրույթներն ու արդյունքները:

1. Վաճառականական ձեռնարկների հեղինակ Կոստանդ Ջուղայեցին 17-րդ դարի հայ մատենագրության անտեսված ու ստվերում մնացած հեղինակներից մեկն է, ինչն ուղղակի հակասության մեջ է նրա շարադրած բացառիկ երկերի կարևորության հետ: Նա հայ իրականության մեջ առաջինն էր, որն իր ձեռքը գրիչ է վերցրել առևտրական-մասնագիտական ձեռնարկներ շարադրելու համար՝ այդպիսով հիմք դնելով հայկական վաճառականական գրականության ժանրին: Այս ուղղության առաջացումը թելադրված էր համաշխարհային առևտրում ազդեցիկ դիրքեր ձեռք բերած և Լոնդոնից ու Ամստերդամից մինչև Մանիլա ձգվող առևտրական ցանց ստեղծած ջուղայեցի վաճառականության կարիքներով՝ ունենալու առևտրական տեղեկատվության հուսալի ու համապարփակ ձեռնարկ-դասագրքեր:

2. Կոստանդ Ջուղայեցու մասին ցայսօր առկա տվյալները վերաբերում են 1685 թ. ի վեր նրա ծավալած գործունեությանը, երբ նա հայտնի էր մի կողմից Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցում անցկացրած իր առևտրական դասընթացով, իսկ մյուս կողմից՝ որպես ջուղայեցիների հոգևոր առաջնորդ, ապագա հայրոց կաթողիկոս Ալեքսանդր Ջուղայեցու (1706-1714 թթ.) հայր: Հայերեն ձեռագրերի հիշատակարաններից հայտնի այս սահմանափակ տեղեկատվությունը, որը պատկերացում չի տալիս Կոստանդ Ջուղայեցու նախընթաց ժամանակահատվածի գործունեության մասին, սույն հետազոտության շրջանակներում լրացվել է նորահայտ տվյալներով: Ինչպես ցույց է տալիս Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դիվանում ու Վենետիկի պետական արխիվում պահպանվող փաստաթղթերի ուսումնասիրությունը, առնվազն 1660-ական թթ. Կոստանդ Ջուղայեցին

արդեն ներգրավված էր վաճառականական գործունեության մեջ՝ առևտրով զբաղվելով միջերկրածովյան նավահանգիստներում: Նրա վաճառականական անցյալի բացահայտումը մի կողմից լույս է սփռում առևտրական երկեր գրելու շարժառիթների վրա, իսկ մյուս կողմից՝ նրան դասում հայ վաճառական-հեղինակների շարքին:

3. Մատենագրական ժառանգությունը, որ մեզ է հասել Կոստանդ Ջուղայեցուց, պայմանականորեն բաժանվում է 2 խմբի՝ տպագիր ու ձեռագիր: Նրա միակ տպագիր երկը, որը, առանց արժանահավատ հիմքերի, երկար ժամանակ համարվել է թարգմանական աշխատանք, լույս է տեսել Մարսելում 1675 թ. «Արիեստ համարողութեան» խորագրով: Ձեռագիր երկերը մեծամասնություն են կազմում Կոստանդ Ջուղայեցու գրավոր ժառանգության մեջ, իսկ այդ շարքում առանձնաձևում են «Աշխարհաժողով» ու «Դռներն ռաղամին» խորագրերով առևտրական ձեռնարկ-դասագրքերը՝ շարադրված 1687 թ. Նոր Ջուղայում: Հենց այս աշխատությունների անտիպ լինելն էլ բացասաբար է ազդել դրանց գիտական շրջանառության վրա՝ հայկական վաճառականական գրականության ժանրի հիմնադիր Կոստանդ Ջուղայեցուն հանիրավի թողնելով ստվերում:

4. «Աշխարհաժողով» ու «Դռներն ռաղամին» խորագրերը կրող վաճառականական ձեռնարկ-դասագրքերը մեզ են հասել 6 ձեռագիր ընդօրինակություններով: Դրանցից 3-ը պահվում են Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում, 2-ը՝ Օքսֆորդի Բոդլեյան գրադարանում, ևս 1-ը՝ Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքում: Այս ձեռնարկների ձեռագրական ավանդույթի մասին ամբողջական պատկերացումը առաջին քայլն է դրանց գիտական բնագրերի պատրաստման ու հրատարակության ճանապարհին:

5. Հայկական վաճառականական ձեռնարկները ըստ երևույթին ավելի մեծ ճանաչում են ունեցել դրանց շարադրման ժամանակաշրջանում, քան ներկայումս: Այսպես՝ Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկները ընդօրինակման աղբյուր են եղել բոլոր այն հայ հեղինակների համար, որոնք իրենց առաջ դրել են առևտրական բնույթի որևիցե երկ շարադրելու նպատակ: Ամենահայտնի օրինակը Ամստերդամում 1699 թ. տպագրված «Գանձ չափոյ, կշռոյ, թւոյ եւ դրամից բոլոր աշխարհի» ձեռնարկն է, որում դրա հեղինակ Ղուկաս Վանանդեցին ամբողջական հատվածներ է ընդօրինակել Կոստանդ Ջուղայեցու երկերից՝ դրանով հանդերձ ցուցաբերելով ստեղծագործական որոշակի ինքնուրույնություն: Հաշվի առնելով համանման այլ օրինակներ ևս՝ կարող ենք արձանագրել, որ հայկական վաճառականական գրականության վրա Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկ-դասագրքերի ազդեցությունը հիշեցնում է եվրոպական այն ավանդույթը, երբ բազմաթիվ հեղինակներ հետևում ու ընդօրինակում էին ֆրանսիացի հեղինակ ժակ Սավարիի «Կատարյալ վաճառականը» մեծ տարածում ստացած երկը՝ ցանկանալով իրենց աշխատությունների համար ապահովել նույն համբավը:

6. Հայկական վաճառականական ձեռնարկներում ամփոփված է առևտրական տեղեկատվության կամ այսպես կոչված «ամենաթանկ ապրանքի» հսկայական քանակություն, ինչը պայմանականորեն կարելի է տրոհել 3 խմբի: Այսպես՝

Կոստանդ Զուղայեցու առևտրական երկերում հստակ առանձնանում է բարոյախրատական ու առևտրական խորհուրդների մի շերտ, որոնցում նա քննարկել է վաճառականի բարոյական կողքերսի հարցը և դրա բաղկացուցիչ մաս կազմող մի շարք կանոններ ձևակերպել որպես «վաճառականական պատվիրաններ»: Երկրորդ՝ Կոստանդ Զուղայեցին իր ընթերցող վաճառականներին ապահովել էր համաշխարհային առևտրի կենտրոնների այնպիսի մանրամասն նկարագրությամբ, որը ներառում էր չափազիտական ու դրամագիտական տվյալներից մինչև ապրանքների տեսականու ու մաքսատուրքերի մասին տեղեկատվություն: Եվ երրորդ՝ դյուրացնելու համար հայ վաճառականների առևտրական գործունեությունը՝ Կոստանդ Զուղայեցին իր ձեռնարկներում զգալի տեղ է հատկացրել նաև առևտրական թվաբանության հարցերին:

7. Իր բարոյախոսական խորհուրդներում Կոստանդ Զուղայեցին միանում է վաճառականական էթիկայի նորմերի շուրջ քննարկումներին, որոնք սկիզբ էին առել դեռևս 14-րդ դարի իտալական ձեռնարկներում: Բարոյական խրատներից բացի՝ ջուղայեցի վաճառականներին նա տալիս է նաև զուտ առևտրական խորհուրդներ, որոնք հիմնված էին սեփական փորձառության վրա և ճշգրտորեն էին արտացոլում վաճառականի կենսակերպը:

8. Վաղ արդի դարաշրջանի համաշխարհային առևտրի շուկաների նկարագրությունը կարելի է գտնել Կոստանդ Զուղայեցու «Աշխարհաժողով» ձեռնարկում: Այն սկսվում է 72 քաղաքներից ու երկրներից բաղկացած մի ցուցակով, որում ընդգրկված էին ջուղայեցի վաճառականության համար առևտրական հետաքրքրություն ներկայացնող բնակավայրերը: Ըստ այդ ցուցակում բերված հաջորդականության՝ հեղինակը հերթականությամբ ներկայացնում է առևտրական շուկաներից յուրաքանչյուրը, իսկ ամեն բնակավայրի նրա առևտրական նկարագրությունը թողնում է հանրագիտարանային բառահոգվածի տպավորություն:

9. «Արհեստ համարողութեան» և «Դոներն ռաղամին» ձեռնարկների միջոցով հայ վաճառականները կարող էին ձեռք բերել թվաբանական հմտությունների այն նախնական պաշարը, որը բավարար կլիներ առևտրական գործի մեջ մտնելու համար: Այդ առումով տեսական գիտելիք հաղորդելուց բացի՝ Կոստանդ Զուղայեցին ի մի է բերել նաև գործնական առաջադրանքների մի հարուստ հավաքածու՝ դրանք ձևակերպելով որպես առևտրական խնդիրներ: Շուրջ 160 այսպիսի խնդիրներում նա նկարագրում է հաշվարկ պահանջող առևտրական զանազան իրավիճակներ և խնդրի ներկայացումից հետո անմիջապես ցույց տալիս լուծման ճիշտ տարբերակը:

10. Վաճառականական ձեռնարկները կարևոր տեղ են զբաղեցրել վաղ արդի դարաշրջանի հայ առևտրական կրթության ասպարեզում: Զուղայեցի վաճառականները մասնագիտական կրթություն ստանալու ու անհրաժեշտ հմտություններ կուտակելու 3 տարբերակ ունեին: Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքում Կոստանդ Զուղայեցու դասընթացին մասնակցելուց բացի՝ նրանք կարող էին հաճախել Նոր Զուղայում ու շրջակայքում հաստատված կաթոլիկ քարոզիչների դպրոցները՝ եվրոպացի հոգևորականներից սովորելով եվրոպական լեզուներ: Երիտասարդ

ջուղայեցիների մասնագիտական զարգացման մյուս ուղին առտնին կրթությունն էր, այն է՝ ընտանիքի որևէ ավագ անդամի հետ առևտրական ուղևորության մեկնելն ու առևտրական գործի վերաբերյալ «առաջին ձեռքից» հմտություններ կուտակելը: Նոր Ջուլայի Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցի աշակերտների քանակական տվյալները հուշում են, որ առևտրական կրթության այս բարենպաստ համակարգում ջուղայեցի երիտասարդները նախապատվություն են տվել Կոստանդ Ջուլայեցու առևտրական դասընթացին, որը կազմակերպվում էր նրա շարադրած ձեռնարկ-դասագրքերով:

11. Նոր Ջուլայի Ս. Ամենափրկիչ վանքում, այլ կերպ ասած՝ հայ առևտրական ցանցի կենտրոնում գործածությունից բացի՝ հայկական վաճառականական ձեռնարկները լայնորեն շրջանառվել են նաև ցանցի այլ մասերում: Ձեռնարկների դատարկ էջերին վաճառականների թողած հիշատակարանները թույլ են տալիս կռահել, որ դրանք նաև կատարել են ուղեցույցների գործառույթ ու ուղեկցել վաճառականներին իրենց առևտրական ուղևորությունների ժամանակ: Ուստի հետևելով Կլոդ Մարկովիցի «շրջանառության տեսությանը»՝ բոլոր հիմքերն ունենք Կոստանդ Ջուլայեցու ձեռնարկները դիտարկելու որպես Նոր Ջուլայի առևտրական ցանցում տեղեկատվության շրջանառության կարևոր միջոց:

12. Վաղ արդի դարաշրջանի համաշխարհային առևտրում հայ վաճառականների տպավորիչ հաջողությունները կամ, ինչպես Ֆեռնան Բրոդելն է ձևակերպել, «կախարդական հաջողությունը» մեծապես պայմանավորված էին ջուղայեցիների միջավայրում տեղեկատվության փոխանցման ու ստացման համակարգի բարեհաջող գործունեությամբ: Այդ համակարգում իրենց տեղն ունեցող հայկական վաճառականական ձեռնարկները գալիս էին տեղայնացնելու առևտրական տեղեկատվությունը մասնագիտական դասագրքերում ամփոփելու եվրոպական ավանդույթները, որոնց սկիզբը դրվել էր իտալական քաղաք-պետություններում հայկական վաճառականական երկերի հեղինակ Կոստանդ Ջուլայեցուց շուրջ 300-400 տարի առաջ:

Ամենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Նոր Ջուլայից Երևան ու Էրզրում. ճիզվիտ քարոզիչները հայկական բնակավայրերում XVII-XVIII դդ., Երևան, Հեղ. հրատ., 2018, 236 էջ:

2. Կրթություն և հաջողություն. Նոր Ջուլայի Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցը (XVII դ.-XVIII դ. սկիզբ), «Մատենադարանի 3-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի հոդվածների ժողովածու» (խմբ.՝ Վ. Տեր-Ղևոնդյան, Կ. Մաթևոսյան և ուրիշներ), Երևան, 2018, էջ 51-64:

3. Գրախոսություն՝ Աշոտ Հովհաննիսյան, Զաքարիա Ագուլեցին և իր ժամանակը: Հրատարակության պատրաստեց Վարուժան Պողոսյանը, Երևան, ԵՊՀ հրատ., 2017, 190 էջ + 1 ներդիր, «Հայագիտության հարցեր», 2018, թիվ 3, էջ 220-225:

4. Նոր Ջուլայի ու Ամստերդամի միջև. վաղ արդի հայկական վաճառականական ձեռնարկների համեմատություն, «Բանբեր Մատենադարանի», հատոր 27, Երևան, 2019, էջ 343-370:

5. Կոստանդ Ջուլայեցու վաճառականական ձեռնարկների ձեռագրական ավանդույթը, «Պատմություն և քաղաքականություն», 2019, թիվ 4 (5), էջ 32-47:

6. Մի քանի դիտարկում վաճառականական ձեռնարկների հեղինակ Կոստանդ Ջուլայեցու վերաբերյալ, «Հայագիտության հարցեր», 2019, թիվ 3, էջ 66-78:

7. Առևտրական տեղեկատվությունը և վաճառականները ուշ միջնադարից մինչև վաղ արդի դարաշրջան, «Պատմություն և քաղաքականություն», 2020, թիվ 2 (7), էջ 60-70:

8. Դառնալով վաճառական վաղ արդի դարաշրջանում. վաճառականական էթիկան ու խորհուրդները Կոստանդ Ջուլայեցու «Աշխարհաժողով» ձեռնարկում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2020, թիվ 2, էջ 40-55:

БАЛДАРЯН САРКИС МАНВЕЛОВИЧ

АРМЯНСКИЕ УЧЕБНИКИ ТОРГОВОГО ДЕЛА В ТОРГОВОЙ СЕТИ НОВОЙ ДЖУЛЬФЫ

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 “История Армении”

Защита состоится 24-го июля 2020 г., в 14⁰⁰ на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

В диссертационной работе проводится всестороннее изучение армянских учебников торгового дела, распространенных в торговой сети Новой Джульфы в течение раннего нового времени. Диссертация состоит из введения, трех глав, заключения и списка использованных источников и литературы.

Во введении обосновывается важность и актуальность темы, определяется научная новизна исследования, указываются его цели и хронологические границы, а также рассматриваются использованные источники и литература.

В первой главе – “Констант Джугаеци и армянские учебники торгового дела”, обсуждается роль Константа Джугаеци в создании и развитии армянской торговой литературы во второй половине 17-го века. Он жил в Новой Джульфе – армянском пригороде столицы Сефевидов Исфahan – и был учителем в школе торгового дела. Константин Джугаеци составил три учебника, чтобы предоставить армянским торговцам значительный объем коммерческой информации: «Искусство арифметики», «Компендиум» и «Введение в арифметику». Некоторые из его работ никогда не были опубликованы и дошли до нас в армянских рукописях, хранящихся в Ереване, Оксфорде и Новой Джульфе. Опираясь на документы, хранящиеся в Монастыре Святого Всеспасителя Новой Джульфы и Государственном архиве Венеции, в главе показывается, что Константин Джугаеци участвовал в коммерческих операциях в портовых городах Средиземноморья в 1660-х гг. Из коммерческой жизни Константа сделан вывод о том, что он писал свои торговые учебники на основе информации и опыта “из первых рук”.

Во второй главе – «Коммерческая информация в армянских учебниках торгового дела», обращается внимание на то, как «самый ценный товар» или коммерческая информация была отражена в армянских учебниках торгового дела. В главе также проливается свет на то, как европейские купцы получали и обменивались коммерческими новостями, и описываются способы передачи

информации между армянскими купцами в сравнении с европейским опытом. После рассмотрения важности информации в жизни торговцев обсуждаются три формы коммерческой информации, включенные в армянские учебники торгового дела: этические и коммерческие советы, описание мировых торговых рынков и коммерческая арифметика. Этические и коммерческие советы, составленные Константином Джугаеци в “Компендиуме”, изучаются в широком контексте европейской торговой литературы. Следуя библейской традиции, Константин Джугаеци сформулировал некоторые из своих моральных наставлений как своего рода “торговые заповеди”. Опираясь на собственный опыт в качестве бывшего торговца, он предоставил читателям своих пособий ценные коммерческие советы, в которых он представил компоненты успешной коммерческой деятельности. Кроме того, “Компендиум” содержит полное описание всех важных рынков от Манилы на востоке до Амстердама и Лондона на западе. Это описание мира раннего нового времени предлагает широкий обзор всех валют и весов, используемых в каждом месте. “Искусство арифметики” и “Введение в арифметику” – два других пособия Константа Джугаеци – посвящены коммерческой арифметике, чтобы дать возможность торговцам осознать основные математические понятия и уметь работать с ними.

Третья глава – «Использование учебников торгового дела Константа Джугаеци в торговой сети Новой Джульфы», посвящена распространению этих армянских справочников по всему центру и периферии торговой сети Новой Джульфы. Молодые армяне имели прекрасную возможность начать карьеру торговца после получения специализированного образования в профессиональном училище. Школа находилась в монастыре Святого Всеспасителя Новой Джульфы и управлялась Константином Джугаеци, который проводил коммерческие курсы со своими собственными учебниками. Учебники торгового дела Константа также были вывезены армянскими торговцами на рынки Индии и Средиземноморья во время их деловых поездок в качестве ценных путеводителей. В главе показано, что в торговой сети Новой Джульфы постоянно распространялся литературный материал торгового дела, и учебники армянских торговцев были важным способом распространения коммерческой информации наряду с деловой перепиской.

Основные результаты исследования обобщены в выводах.

SARGIS MANVEL BALDARYAN

ARMENIAN COMMERCIAL HANDBOOKS IN THE NEW JULFAN TRADE NETWORK

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of “History of Armenia” 07.00.01

The defense of the dissertation will be held on July 24, 2020, at 14⁰⁰ at the session of the Specialized Council 004 on Armenian History of SCC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Ave. 24/4).

SUMMARY

The dissertation offers a comprehensive study of Armenian commercial handbooks circulated in the New Julfan trade network during the early modern period. It consists of an introduction, three chapters, conclusions, and a bibliography.

The introduction substantiates the importance and relevance of the topic, defines the scientific novelty of the research, states its goals and chronological boundaries, and provides a list of sources and literature used.

Chapter 1, titled “Constant of Julfa and Armenian Commercial Handbooks”, discusses the role of Constant of Julfa in establishing and developing Armenian trade literature in the second half of the 17th century. He lived in New Julfa, an Armenian suburb of the Safavid capital Isfahan, and was a schoolmaster in a trade school. Constant of Julfa composed three handbooks to provide Armenian merchants with a significant amount of commercial information: “Art of Arithmetic”, “Compendium”, and “Introduction to Arithmetic.” Some of his works have never been published to this date and are preserved in Armenian manuscripts stored in Yerevan, Oxford, and New Julfa. Relying on the documents preserved in New Julfa’s All Savior’s monastery and Venetian State Archives, the chapter shows that Constant was involved in commercial operations in Mediterranean port cities in the 1660s. What can be concluded from Constant’s commercial career is that he composed his trade manuals based on first-hand information and experience.

Chapter 2, titled “Commercial Information in Armenian Trade Manuals”, invites attention to the issue of how “the most precious good” or commercial information was reflected in Armenian trade manuals. It sheds light on how European merchants received and exchanged commercial news throughout the early modern age and provides a discussion of means of conveying commercial information between Armenian

merchants in comparison with European experience. After considering the importance of information in the lives of merchants, three forms of commercial information included in Armenian trade manuals are discussed: ethical and commercial tips, description of global trade markets, and commercial arithmetic. The ethical advice and commercial tips compiled by Constant of Julfa in his “Compendium” are studied in the broader context of late medieval and early modern European trade literature. Following the Biblical tradition, Constant formulated some of his moral instructions as a sort of “Mercantile Commandments.” Relying on his own experience as a former merchant, he provided readers of his manuals with valuable commercial advice in which he presented the components of a successful commercial activity. Besides, “Compendium” contains a comprehensive description of all the important markets stretching from Manila in the East to Amsterdam and London in the West. This description of the early modern commercial world offers a broad overview of all the currencies and weights used in each place. “Art of Arithmetic” and “Introduction of Arithmetic” – two other manuals by Constant of Julfa – are devoted to commercial arithmetic to make merchants aware of the main mathematical concepts and skillful at their transactions.

Chapter 3, titled “The Usage of Commercial Handbooks of Constant of Julfa in the New Julfan Trade Network”, dwells upon the circulation of Armenian commercial handbooks throughout both the center and peripheries of the New Julfan trade network. Young Julfan Armenians had an excellent opportunity to begin their commercial career after the specialized education provided by the trade school. The school was located in New Julfa in the compound of the All Savior’s monastery and managed by Constant of Julfa himself, who ran commercial courses with his own manuals. In the meantime, Constant’s commercial handbooks were taken to the marketplaces of India and the Mediterranean by Armenian merchants during their business trips as valuable guidebooks. The chapter shows that there was a constant circulation of commercial literature within the New Julfan trade network and that what makes the Armenian trade diaspora distinct is that Armenian merchant manuals were an important way of disseminating commercial information along with business correspondence.

The main findings and results of the study are summed up in the conclusions.

